Նժդեհ
Կիսամարդը
ՍՈՒՐԵՆ ԳԱՐԳԱՐՅԱՆ

Նժդեհ
Կիսամարդը
ՍՈՒՐԵՆ ԳԱՐԳԱՐՅԱՆ

Աշխատս քա՛ջ էր ես ինչ ծպտում՝
Ասես... կինս դու չինես.
Ես կիսրգեմ քո գրկում՝
Թեև գրկինս դու չինես:
Հաճախ սեր ես ու հուզում՝
Սիրո կարոտը, սիրո ցույց...
... Ու աշխատե՛ս ես՝ ես ուզում՝
Մ՚իրար ծրիինս դու չինես:

ԱՐԻՍ
ԳՐԻԳՈՐՅԱՆ.
Անձնական
գրքեր

ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծովածաղկի աչքեր

Քառասարեկյոթյուններ

Ստեփանակերտ 2001

ԳՄԴ 84 Հ7-5
Գ 313

Հայաստանում Քրիստոնեությունը
որպես պետական կրոն Հռչակելու
1700 - ամյակին

Presented special for 1700
Jubilee of Christianity
in Armenia

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա.Ա.

Գ 313. **Ծովածաղկի աչքեր:** Բանաստեղծություններ (Արիս Գրիգորյան), Ստեփանակերտ, 2001, 28 էջ:

Ժողովածուն ընդգրկում է վերջին մեկ տարում գրված սիրային բանաստեղծություններից մի փունջ

© Արիս Գրիգորյան, 2001

Ճաղկանց փունջ ես, կոկոն վարդ ես,
Ով քեզ քաղի՝ կրծքին զարդ ես:

Վարդն ի՞նչ է, որ չափվի քեզ հետ,
Իսկ ե՞ս ... Սերս կորչի՞ անհետ:

Նազերիդ մեջ կան կորածներ,
Արդյո՞ք ես էլ... Անհե՞տ ...Իմ սեր:

Ոոպեաչափ սիրո՞ թարթ ես ...
... Դու աստղաշուրթ, աստղազարդ ես:

29.08.00

Դու քնել ես հոգնած,
Իսկ ես արթուն եմ, տես,
Քո նկարի դիմաց
Կանգնել նայում եմ քեզ:

Այնպես ժպտուն ես դու,
Այնպես տխուր եմ ես,
Հիմա քնած ես դու,
Իսկ ես փնտրում եմ քեզ:

15.09.00

Ես ի՞նչ անեմ քո պատկերը՝
Մթնաշղարշ ակնոցով,
Դու ցույց տուր ինձ քո աչքերը,
Քո աչքերը՝ ջինջ ու ծով:

Թող այդ ծովի մեջ խեղդվեմ ես,
Ափ չհասնի թող հոգիս,
Միայն ինձ հետ սերդ կիսես,
Քեզ ունենամ միշտ կողքիս:

15.09.00

«Ես միշտ ժպտամ էիր»՝
դո՜ւ ասացիր...
28.09.00

Այնպես լա՛վ ես ինձ ժպտում,
թվում է՝ դու ես իմ...կինը,
Կորչեմ՝ թող ես քո գրկում,-
կլինե՞ս դու իմ գրկինը,
Համակ սեր ես ու հուզում,-
կարոտիս ցավն է քո...գինը,
Որքան եմ, գիտե՞ս,ուզում՝
դու լինես միշտ իմ մտքինը:

09.10.00

Մատիկը Ռ.Հ.-ին

Ալեհոյզ, լոսեղ աչքերում
Հմայք է՝ մաքուր կանացի ...

16.11.00

Անուշ է գերում այնպես՝
նազանքով քնքուշ-առնացի,
Ալեհույզ-հուր աչքերում
հիացք է, սեր-կիրք կանացի,
Իսկ ի՞նչ է բախտն ինձ բերում՝
տանջամահ լինելուց բացի,
Ոռշնական իմ այս «դերում»՝
վախենամ սիրտը չբացի:

16.02.01

Վարդաբույր շուրթերդ կեռ
Ինչվա՞մ են շուրթերթս վրա։

24.09.01

Հնունդ երազ տխուր,

Լուսեղեն թախիծ է անկեզ,
Վարդաբույր շուրթերդ տուր, -
այրվում են շուրթերս հրկեզ,
Ոտում եմ աղոթքով լուռ, -
դողդոջուն հույսիկ տա մի հեզ,
Ոռշնություն մի խաղա զուր, -
աղվական, սիրում եմ ես քեզ ...

24.09.01

Ես քախծոտ աչքերում էրապ կա վայրի.-
Ես ինչպե՞ս թողնեմ քո քախծին ինչ այրի...

17.07.01

Հարոտ կա աչքերիդ մեջ,
աչքերիդ ցոլանքը վայրի
Ես ինչպե՞ս ներս թողնեմ՝ գա,
բա որ գա ու սիրտս այրի՞,
Իսկ հետո՞, ինչպե՞ս ապրեմ:
Մի ստիպիր, որ սիրտս զայրի...
... Ի՜նչ հեշտ ես դու մարսում, թուղթ,
գովեստն ու ... հեգնանքը սայրի:

27.07.01

Ես ուզում եմ ցմրուր
Քո Բովշանդը Ճաշակել ....
19.07.01

Ոչի՞նչ, որ սիրագարված
աչքերի ցոլանք տվեցի,
Ժպտա, թող աշխարհը քեզ
չթվա դատարկ մի խեցի,
Թե՞ իզուր երազս ես
քո առաջ այսպես խնկեցի,
Ե՞րբ սիրո վայելք տեսա,
այսքան շուտ ինչու՞ «ծնկեցի»:

21.04.01

Ու՞ր է Հիմա՝ չգիտեմ,
Ընթ. լավ, էլ գգվեմ...
07.07.01

Քեզ անվերջ եմ սիրելու,
գալո՞ւ ես բայց ինձ մոտ նորից,
Որ աչքերիդ մեջ փնտրեմ
կարոտ, երազ, նաև՝ թախիծ,
Գրկեմ, գգվեմ, որ քամվի
դառնությունը քո աչքերից,
Արի, լավս, քեզ սիրեմ,
թող աչքերդ միշտ ժպտա՜ն ինձ:

28.09.01

Դու՝ ի՞նչ էս ու�ում ինչանից,-
Բաց քող ինչ՝ գնամ էս, թախիծ...
17.07.01

Հավեր ես նյութում, թախիծ,
բայց էլի գոհ եմ քեզանից,
Քեզ ե՞րբ եմ վատ խոսք ասել,
խիղճ ունե՞ս դու գոնե մի քիչ,
Սիրտս քեզ երգ է տալիս,
իսկ դու միշտ ցավ ես բերում ինձ,
Հոգնել եմ, բաց թող՝ գնամ,
տարփածու - տնարար թախիծ ...

27.07.01

Հորից ամառն է խայտում շողերով հրկեզ,
Ես ուզում եմ ժպիտդ դու ինձ նվիրես:

Լույսն է ցայտում քո հուռթի, քո հուր
աչքերից,
Լուսաթաթավ օրն այս դու ապրիր
անթախիծ:

Իսկ դրսում դեռ ամառն է՝ չարախինդ ու...
կեզ,-
Կնացիր ինձ, իմ լավս, ես պաշտում եմ
քեզ...

25.07.01
01.08.01

Միայն դու տեսար ոսկին արեւի՝
Արհամարհելով վտանգը մահվան,
Որպեսկան այդ պահին երեւի
Ինձ ձգի կարոտն անսահմանության...

Նայիր, թախիծ է կաթում երկնքից, -
Երկնահաս Տերն է՝ կարոտել է ինձ:

03.12.00

Հդարձնե՞ս սիրտս՝ գերիդ,
Անվերջ նայեմ թող աչքերիդ:

Որպեսզի այս լավ պահին
Ինձ զգում եմ Աստծո գահին...

Նվեր տուր քո ժպիտը ինձ՝
Երկինք խմեմ քո աչքերից:

26.12.00

Գնացել ես: Ես գիտեի, որ հրաժեշտ չես տալու,
Այնպե՛ս արի...բայց ես գիտե՞մ
մեկ էլ երբ ես դու գալու:

Յուրաքանչյուր անցնող վայրկյանն
հարյու՞ր տարի է, հազա՞ր,
Անհամբեր եմ, ես չեմ կարող,
չեմ սպասում ես երկար:

Նույն էլ գուցե դու՞ մտածես,
կամ էլ թե չէ՝ չգիտեմ,
Ես այսպես եմ, սրտիս շատ եմ
մոտ ընդունում հարգ ու ... քեն ...

01.01.01

ՈՒՐԱՑՈՒՄ

Տրնոլեր՝ էեվ՝ Մարտի 8-ին:
՝Նաե՝ երեվ մեխակներ...

Դու արժանի ես ավելիին,
Քան մեխակներն այս գունագեղ,
Բայց գուցե թվան դրանք տգե՞ղ,-
Դու արժանի ես ավելիին:

Քո քայլքով, վարքով, տեսքով շքեղ՝
Շատ ես նման այս մեխակներին,
Եվ՝ արժանի ես ավելիին,
Քան՝ մեխակներն այս գունագեղ:

08.03.00

Յ Չ ... ԱՌԱՅԱԿԱ

Աշուշ է շշուկը այնպես,
Նայվածքը՝ նազանք է համակ,
Նազում են շուրթերը անտես,
Անունն ինձ սեր է ու հավատ:

Այնպե՞ս եմ նրան կարոտել,
Նայում եմ՝ հեռու է այնքան,
Նազո՞ւմ է՝ կտեսնե՞մ մեկ էլ,-
Անհո՞ւշ եմ ես սիրում Նրան:

Ասում են ինձ՝ զուր ես թախծում,
Նորից քո հին օրը կգա ...
Նորից ինձ նույն միտքն է տանջում,-
Անցնում է գիշերն ու ... չկա:

03.08.01

Ով է՞ս դու՝ կրծդիս պարտ ես...

Քեզ քաղե՞լ են արդեն,
Թե՞ դեռ անքաղ ես դու,
Քեզ շահե՞լ են արդեն,
Թե՞ դեռ անդաղ ես դու,
Սպանե՞լ ես դու ինձ,
Բայց դեռ անքա՞ղ եմ ես,-
Անքաղ դիա՞կ եմ ես,
Իսկ դու՞,- դագա՜ղ ես դու...

02.10.00

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԴԻՊՈՒՄ

Մ՝ անձանոթի

Քեզ բարևեց այդ աղջիկը,
Իսկ ինձ՝ անգամ չնայեց,
Բայց այդպես էլ չհասկացար,-
Նա քե՞զ, թե՞ ինձ հմայեց:

Իսկ իրերի ընթացքը պարզ
Չարգելակես դու հանկարծ,
Թող իր ճամփան շարունակի
Չհասկացված մի հայացք:

29.09.01

ՀԱՔՈՒԹՅՈՒՆ

Գիշերը՝ անքուն, անդադրում, անվերջ,
Քունը կոպերիս նինջ էր քարոզում,
Իսկ ե՞ս՝ դեմքդ էի ուզում նկարել
Սավանի վրա, ինչպես երազում:

Քունս չէր տանում...Բարձս գիշերվա
Կարոտն էր թախծում քո վերադարձի,
Բայց դու չեկար և սավանի վրա
Արտապատկերվեց... նկարը...բարձի:

25.07.01

ՀՈՒՄ...

Ինչու՞ դու ինձ չես հայտնվում երազում,
Չէ՞ որ քեզ եմ գիշեր - ցերեկ երազում:

Չէ՞ որ դու ես օրս, կյանքս, արեւս,
Բայց լուռ ես դեռ եւ ... անամոք է սերս:

... Ես զանգեցի, իսկ դու քնած էիր դեռ,
Երբ արթնացար՝ ձայնդ շատ էր անտարբեր:

Ու թվաց, թե մոռացել ես արդեն ինձ,-
(Մի նեղանա, չեմ խուսափի քո պատժից):

Էլ չզանգե՞մ, դու քնա՞ծ ես լինում միշտ,
(Ո՞նց հասկանամ՝ որն է սխալ, որը՝ ճիշտ)...

... Չէ, չեմ ուզում, որ երազս դառնանա,
Իմ այգին եկ, արի ու մի հեռանա:

02.10.00

ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ

Անշարժ է, անխոս է պատկերդ,
Դու հիմա հեռու ես, շատ հեռու,
Փայլում են սակայն դեռ աչքերդ՝
Օրերիս տխուր այս գիշերում:

Չգիտեմ՝ կցրվի՞ մշուշը,
Խավարը կծնի՞ նոր լուսայգ,
Թե՞՝ ինձ հետ պիտի քո այս հուշը
Տառապի օրերում խավարակ:

...Իսկ պատից կախված է նկարդ,
Ու անհույս խոստանում է գալդ...

17.01.01

ՀԱՄԱՀԻՄՆՔ-1

Թէրապէ-դ Ենահիմին

Ակրոստիքոսը ինչ տեսակ «քոս» է,-
Նրանից վախի վարակ չկա,
Անուշ չափածոն հար մշտահոս է՝
Հիասքանչ խոսք է մշտավկա,
Իսկ քեզ՝ ասում եմ՝ սիրտդ ափսոս է,
Տես, չվարակվես, փրկում չկա...

16.11.00

ՀՐԱՇԱԽՄԲԱՂ - 2

Հրծքածալ,
Կրծքախալ,
Կրծքախաղ՝
Խելքամաղ:

Կրծքակալ,
Բացվող ծալ՝
Կթողնե՞ս
Մտնեմ ներս...

18.09.00

ՉԳԱ՛Ս... ՉԳԱ՞Ս...

Եթե չգաս՝ կմոխրանամ կարոտից,
Եթե չգաս՝ հետո էլ ո՞նց նայես ինձ:

Չգա՛ս,եթե հենց այնպես ես դու գալու,
Չգա՛ս, իսկ ես քեզ էլ բարեւ չեմ տալու...

Չգա՞ս... Ցավի ճիչ է՝ սիրտս չցավի՞,
Չգա՞ս... Իմս քի՞չ է՝ քո՞նն էլ գումարվի...

Չգա՞ս... Լա՞վս... Սիրտս... սիրով լի է նա...
Կգա՞ս, ցավս: Արի՝ խինդս լիանա...

Դե՝ մի՛... ժպտա՞... ես քեզ ե՞րբ եմ վատ ասել...
Արի ու տես, թե քեզ ո՞նց եմ սպասել...

11.11.00
14.09.01

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծաղկանց փունջ ես ... 3
Դու քնել ես ... 4
Ես ի՞նչ անեմ ... 5
Այնպես լա՜վ ես ինձ ժպտում ... 6
Անու՜շ է գերում այնպես ... 7
Անունդ՝ երազ տխուր ... 8
Կարոտ կա աչքերիդ մեջ ... 9
Ոչի՞նչ, որ սիրագարված ...10
Քեզ անվերջ եմ սիրելու ...11
Դավեր ես նյութում, թախիծ ...12
Նորից ամառն է ...13
Միայն դու տեսար ...14
Կդարձնե՞ս սիրտս գերիդ ...15
Գնացել ես: Ես գիտեի ...16
Ռուզանին ...17
3x...Նույնին ...18
Քեզ քաղե՞լ են արդեն ...19
Պատահական հանդիպում ... 20
Անքնություն ... 21
Արի ...22
Անորոշություն ...23
Բառախաղ-1 ...24
Բառախաղ-2 ...25
Չգա՜ս... Կգա՞ս ...26

Գրական - գեղարվեստական հրատարակություն

Արիս Արսենի Գրիգորյան
Ծովածաղկի աչքեր
Բանաստեղծություններ



Սրբագրիչ՝
Ռուզան Գասպարյան

Համակարգչային ձևավորումը՝
Սամվել Մովսիսյանի

Լուսանկարիչ՝
Աշոտ Երամիշյան

Շարվածքը՝ **Նվարդ Բաղդասարյանի**

Տպագրությունը՝ օֆսեթ:Թուղթ՝ օֆսեթ:Չափսը՝ 30x42 1/16:
Տպաքանակը՝ 500: Գինը՝ պայմանագրային:

Ստեփանակերտ, 2001